«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

01.11.2026-ԻՑ

RETRIEVE
Legal & Tax

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

01. Փոփոխություններով ներդրվում է քվոտաների նոր համակարգ, կացության կարգավիճակների տրամադրման տարեկան նոր սահմանաչափեր: Քվոտաները կարող են սահմանվել՝ կախված կացության կարգավիճակի տեսակից, տրամադրվող թույլտվությունների քանակից և այն հիմքերից, որոնց հիման վրա դիմում է ներկայացվում կացության կարգավիճակ ստանալու համար:

02. Գործող կարգավորման համաձայն՝ աշխատանքի թույլտվությունը, որպես կանոն, կարող է տրամադրվել միայն այն դեպքում, երբ համապատասխան պաշտոնը զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացիներ չկան: Սակայն գործնականում այս մեխանիզմը արդյունավետ չի գործել: Փոփոխություններով աշխատաշուկայի ստուգման համակարգը փոխարինվում է քվոտաների համակարգով: Նոր համակարգը հնարավորություն կտա Կառավարությանը սահմանել միգրացիայի և կացության թույլտվությունների տրամադրման տարեկան նպատակային ցուցանիշներ՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը և միգրացիոն միտումները:

RETRIEVE
Legal & Tax

03.

Փոփոխություններով ներդրվում է Աշխատանքի նպատակով մուտքի նոր վիզա (Work Entry Visa), որը նախկինում նախատեսված չէր Հայաստանի Հանրապետության միգրացիոն օրենսդրությամբ:

Վիզան կարող է տրամադրվել մինչև 120 օր ժամկետով և հնարավորություն է տալիս օտարերկրյա քաղաքացիներին մուտք գործել Հայաստան՝ կարճաժամկետ աշխատանք կատարելու նպատակով, Հայաստանի Հանրապետության տարածքից ներկայացնել աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու դիմում կամ ստանալ արդեն հաստատված կացության քարտը:
Վիզան կարող է լինել միանգամյա կամ բազմակի մուտքի, ենթակա չէ երկարաձգման և կարող է տրամադրվել յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում միայն մեկ անգամ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը կարող է տրամադրվել առավելագույնը **մեկ տարի** ժամկետով:

RETRIEVE
Legal & Tax

04. Փոփոխություններով ընդլայնվում են Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ստանալու իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիների շրջանակները:

Մասնավորապես, մշտական կացության կարգավիճակ կարող է տրամադրվել նաև այն օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր՝

- Հայաստանի Հանրապետությունում իրականացրել են ձեռնարկատիրական գործունեություն և նախորդ հինգ տարիներից առնվազն երեք տարվա ընթացքում ունեցել են ժամանակավոր կացության կարգավիճակ, կամ
- կատարել են ներդրում Հայաստանի Հանրապետությունում:

Մշտական կացության քարտը տրամադրվելու է **5 տարի** ժամկետով:

RETRIEVE
Legal & Tax

Վերանայվել են կացության կարգավիճակի տրամադրման դիմումների ներկայացման ընթացակարգերը:

Նոր կարգի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիները պարտավոր են անձամբ ստանալ իրենց կացության քարտը կամ օրինական բնակության մասին վկայականը և տրամադրել կենսաչափական տվյալներ, այդ թվում՝ մատնահետքեր և էլեկտրոնային ստորագրություն (ստորագրության գրանցման սարքի միջոցով): Միայն այս գործընթացն ավարտելուց հետո համապատասխան փաստաթուղթը կարող է տրամադրվել, և հնարավոր կլինի ակտիվացնել Mobile ID ծառայությունը:

Գործող կանոնը պահպանվում է անփոփոխ. եթե կացության կարգավիճակի տրամադրման դիմումը մերժվում է, օտարերկրյա քաղաքացին կարող է նույն հիմքով կրկին դիմել միայն մեկ տարի անց:

RETRIEVE
Legal & Tax

Կացության կարգավիճակը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե օտարերկրյա քաղաքացու աշխատանքային պայմանագիրը կամ ծառայության պայմանագիրը դադարեցվել է մինչև նրա ժամանակավոր կացության կարգավիճակի գործողության ժամկետի ավարտը, և 15 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրերի էլեկտրոնային համակարգի միջոցով նոր պայմանագիր չի կնքվել:

RETRIEVE
Legal & Tax

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԵՒ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:

Օտարերկրյա քաղաքացին կարող է հավակնել կացության կարգավիճակի, եթե նա՝

- հանդիսանում է հայկական ընկերության բաժնետեր, մասնակից կամ արժեթղթերի սեփականատեր և ընկերության կանոնադրական կապիտալում կատարել է առնվազն 2,000,000 ՀՀ դրամի ներդրում կամ ձեռք է բերել առնվազն 2,000,000 ՀՀ դրամ արժեքով բաժնետոմսեր կամ այլ արժեթղթեր,
- գործունեություն է իրականացնում որպես անհատ ձեռնարկատեր և իր ձեռնարկատիրական բանկային հաշիվներում պահպանում է առնվազն 1,000,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) գումար,
  կամ
- դիմումը ներկայացնելուն նախորդող 60 օրվա ընթացքում ապահովել է առնվազն 1,000,000 ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթի) ձեռնարկատիրական շրջանառություն:

Կացության կարգավիճակը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե՝

- ներդրման չափը նվազել է 1,000,000 ՀՀ դրամից,
- ներդրված կապիտալը դուրս է բերվել ընկերությունից,
- կամ կացության կարգավիճակը ստանալուց հետո 180 օրվա ընթացքում հարկային մարմիններում չի գրանցվել ձեռնարկատիրական գործունեություն:

RETRIEVE
Legal & Tax

Կացության կարգավիճակի ժամկետը երկարաձգելու համար անհրաժեշտ է հաստատել ձեռնարկատիրական գործունեության շարունակական իրականացումը՝ էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ եթե համապատասխան տվյալները համակարգում հասանելի չեն, ապա ներկայացնել դրանք հավաստող փաստաթղթեր:

Կացության կարգավիճակը չի կարող ուժը կորցրած ճանաչվել, եթե ներդրումը մեկ ամսվա ընթացքում փոխանցվել է մեկ այլ հայկական ընկերության կամ վերաներդրվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ իրավաբանական անձում:

RETRIEVE
Legal & Tax

Փոփոխություններով ներդրվում է ներդրումային գործունեության հիմքով Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ստանալու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, այս հիմքով մշտական կացության կարգավիճակ ստանալու կարգավորումները դեռևս ամբողջությամբ սահմանված չեն: Ներդրումային հիմքով մշտական կացության կարգավիճակ ստանալու և այն պահպանելու համար անհրաժեշտ հստակ պահանջները, համապատասխանության չափանիշները և ընթացակարգերը կսահմանվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

RETRIEVE
Legal & Tax

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող փոփոխություններով վերանայվում են ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակի տրամադրման, ինչպես նաև կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետի երկարաձգման կամ փոխարինման հետ կապված մի շարք պետական տուրքերի դրույքաչափերը: Միաժամանակ հստակեցվում են պետական տուրքի վճարումից ազատման դեպքերը և սահմանվում են նոր պետական տուրքեր՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից մատուցվող առանձին ծառայությունների համար:

Կացության կարգավիճակի տրամադրման վերաբերյալ դիմումը մերժվելու դեպքում վճարված պետական տուրքը ենթակա չէ վերադարձման:

RETRIEVE
Legal & Tax